ՌՈՊԵՐ ՀԱՏՏԵՃՅԱՆ

Ռոպեր Հատտեճյանը սփյուռքահայ գրող է, հրապարակագիր, դրամատուրգ և լրագրող: Ծնվել է 1926 թվականի հունվարի 20-ին Կոստանդնուպոլսում՝ Պաքըրգյուղ թաղում (Ստամբուլ, Թուրքիա): 1933-1944 թվականներին նախնական կրթությունը ստացել է Բանկալթիի Մխիթարյան վարժարանում: 1950 թվականին ավարտել է Ստամբուլի համալսարանի գրականության ֆակուլտետի փիլիսոփայության բաժինը:

Հատտեճյանի գրական-հասարակական գործունեությունը սկսվում է 1950-ական թվականներից, թեև դեռ 1946 թ. մամուլում տպագրվել էր առաջին պատմվածքը՝ «Բառասխալ» վերնագրով, որը հետո հեղինակը պիտի դարձներ իր առաջին ժողովածուի խորագիրը: Մխիթարյան վարժարանի սաների միության և նրա օրգան «Սան» մշակութային հանդեսի աշխատանքներին իր գործուն մասնակցությամբ է Հատտեճյանը սկսում գրական-լրագրողական բեղուն գործունեությունը: Նա «Սանի» համախմբագիրներից մեկն էր, իսկ 1967 թվականից դառնում է «Մարմարա» թերթի խմբագիր:

Առաջին պատմվածքների հետ՝ դեռ 1950-ականներից, Հատտեճյանը հանրությանը ներկայացավ նաև թատերախաղերով («Կեանքի մը երեք կիրակիները» (բեմադրվել է 1959թ.), «Կիրակնօրեա հաշուեփակ» (բեմ.՝ 1959 թ.), «Մարդը և իր կեղեւը» (բեմ.՝ 1987 թ.), «Մահը ա՞յս է արդեօք»(բեմ.՝ 1994 թ.):

Արձակագիր Հատտեճյանը հրապարակել է պատմվածքների երկու ժողովածու՝ «Բառասխալ» (1972) և «Մարդոց մեծութեան և խեղճութեան մասին» (1979), մի շարք կարճ պատմվածքներ մամուլում, «Առաստաղ» (1983) և «Առաստաղին մյուս կողմը» (2000) վեպերը: Ուշագրավ են նաև Հատտեճյանի տպավորությունների, հրապարակախոսական էջերի՝ շուրջ երկու տասնյակ գրքերը՝ մեկ ընդհանուր՝ «Հուշատետր» խորագրով: Դրանք «Մարմարայի» էջերում տարիների ընթացքում տպագրված նրա տպավորություններն ու խորհրդածություններն են: Հեղինակի խոսքով՝ դրանք «ավելի գրական ու փիլիսոփայական աշխատություններ են, քան հրապարակախոսություն»:

Հատտեճյանը հեղինակ է նաև գրական-քննադատական, հուշագրական, դիմանկարային բնույթի այլ գրքերի, սակայն նրա գրական վաստակի մեջ առավել նշանակալիցը վիպական ստեղծագործությունն է, երկու վեպերը՝ մի փունջ պատմվածքների հետ:

Ռ. Հատտեճյանը գնահատված հեղինակ է. 2001 թ. արժանացել է Թուրքիայի Հայոց պատրիարքարանի առաջին կարգի պատվո շքանշանի և օրհնության կոնդակին, 2002 թ.՝ ՀՀ «-Մովսես Խորենացի» մեդալի, 2007 թ.՝ ՀՀ մշակույթի նախարարության, Երևանի պետական և Երևանի Խ.Աբովյանի անվան մանկավարժական համալսարանների ոսկե մեդալներին, «Ֆրիտյոֆ Նանսեն» ոսկյա հուշամեդալի, 2009 թ.՝ Հայաստանի ժուռնալիստների միության «Ոսկե գրիչ» մեդալի, 2011 թ.՝ «Սուրբ Մեսրոպ Մաշտոց» շքանշանի: